ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019 թ. հունվարի 15-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Աննա Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Առաջին կիսամյակի ամփոփում:

2. Երկրորդ կիսամյակի խնդիրները և դրանց իրականացումը:

3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

1. **Լսեցին.** *Առաջին կիսամյակի ամփոփման հարցը:*

Ելույթ ունեցավ դասղեկ Աննա Հարությունյանը՝ ներկայացնելով առաջին կիսամյակի արդյունքները: Քննարկվեց յուրաքանչյուր երեխայի առաջադիմության հարցը, մանրամասնորեն ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի գրավոր և բանավոր խոսքը:

Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները: Դասարանում կան այնպիսի աշակերտներ,որոնք դժվարանում են կարդալիս և գրավոր գրելիս:

Որոշեցին.

Ավելի հետևողական լինել բարձր առաջադիմություն ապահովվելու համար: Այն ծնողները, որոնց երեխաները ունեն որոշակի թերացումներ, որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները: Կարդալ և գրել դժվարացող աշակերտների ծնողներն էլ խոստացան ավելի ուշադիր լինել իրենց երեխաներին, դժվարության դեպքում փորձել ուսուցիչների հետ միասին կարգավորել ցանկացած հարց կապված դասերի հետ:

2.Լսեցին.- *Երկրորդ կիսամյակի խնդիրների և դրանց իրականացման հարցը:*

Ժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք պետք է լուծվեն երկրորդ կիսամյակի ընթացքում: Եղան բազմաթիվ հարց ու պատասխաններ ծնող-դասղեկի միջև:

Որոշեցին.- Որոշեցին բոլոր հարցերում համագործակցել դասղեկի հետ և օգնել նրան:

3. **Լսեցին.-**Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով և դպրոցական համազգեստով, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն, պահեն ծնող-դասղեկ-աշակերտ կապը: Քննարկվեց ընթացիկ հարցեր, որոնք վերաբերվում էին դասագրքերի պահպանմանը, աշակերտների հիգիենիկ վիճակին:

Որոշեցին

Որոշվեց ցուցաբերել ավելի շատ ուշադրություն և հետևողականություն, որպեսզի աշակերտները ներկայանան աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հարությունյան / /

Քարտուղար՝ Հակոբյան / /